

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ համար	
Տարեկան	12 Տր.
Վեցամսեայ	6 »
Արսասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 սրլ.
Վեցամսեայ	1.50 »

ՎԱՆՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ  
 Իրականացնում ենք ամսական հոսանքի համար 40 սանթիմ կ. խալ վերջին կեսի համար 20 սանթիմ կ. նրեֆիկսի սև խալ լավեհու համար 20 ռ. գնդ կրչայ:

Պուշկարինյ համար ձեռքի  
 ( 15 ԱՄԵՐԻԿ )

# ՇԱՐՄԱՅԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՎՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԴՐԵՆԱԿՈՒ ՈՒ ՇԱՐՄԱՅԻՆ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

3 APHA  
 17 VII 900

R. P. Kalémezan (Autriche)  
 Mechlin - Namergasse W. 4  
 8 00

la graine de la  
 batiu huanghin

Редакция на вестникъ  
 «Шаржумъ»  
 Варна.

Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ յնն տրուի

Արսասահմանի համար ձեռքի  
 ( 20 ԱՄԵՐԻԿ )

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն . որոնք վճարած չեն , կը խնդրենք անյայտ շրջել բաժանագրիները , որովհետեւ առաջին վեցամսեան կը լրանայ : Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կելլայ :

Ա Ձ Դ

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ Թ. Կ. ՊՕՆՃՈՒԹԵԱՆԻ  
 Նոր Հնթերցարան  
 Բ. ՏԱՐԻ  
 ՎԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Նոր-Լինթերցարանի այս Բ. տարին ալ պիտի գտնէ անտարակոյս այն ընդունելութիւնը , որուն արժանացաւ Ա. տարին , եւ որուն ուղղութեամբը պատրաստուած է արդէն : Գինն է 1 Քրանք . գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 յ/0 զեղջ : Դիմել հետեւեալ հասցէին :  
 Թ. Կ. Պօնճուքեան  
 (Պուլկարիա) Վանայ  
 Մանթ . — Գ. տարին լոյս պիտի տեսնէ յառաջիկայ Սեպտեմբեր ամսոյ սկիզբը :

ԶՈՒԱՐԱՆ «ՎՈՒԹԷՆԳԵՐԿ»  
 (Տպագրական տառերու)

Կարծր մետաղ . Ոռնիկ կարգ  
 Հաշտար բարձրորդիւն  
 Ամէն լիզուէ տպագրական տառեր  
 և զանազանք՝ գոհացուցիչ գնորով-  
 Հասցէ՝  
 Fonderie typographique «Gutenberg»  
 Sophia , Rue Graff Jgnatieff № 3 ,

« ՇԱՒԻՂ »

Շաւիղ ձեռքէ չի ծախուիր : Բաժանեցին է՝ Պուլկարիոյ համար 10 Քրանք , արտասահմանի համար 12 Քրանք , Ամերիկայի համար 2 1/2 տոլար :  
 Հասցէն՝  
 Rédaction de la revue «Chavigh»  
 pensionnat Arménien  
 Varna  
 (—) (—)

ՈՐՈՇԵՆՔ

Մեր միտքն ու մարմինը բըւնապետական կաշկանդումներէն զեռ նոր ազատուած՝ արտասահմանի մէջ , նոր գաղափարներու , նոր փափաքներու երեւոյթէն ու առատութենէն շլացած ու արբշիռ չի կրցաւ պահել իր հաւասարակշռութիւնը :

Ոչ պէտք եղած պատրաստութիւնը ունէինք ընտրանք որդեգրելու ամէն նոր մտածում , ոչ ալ պէտք եղած կորովը՝ փորձանքին ու պատրանքին դիմանալու . ուստի և բնական էր որ տարբեր խառնուածքով և կիսատ դաստիարակութեամբ կալմուած մարդիկս իրար չը հասկնայինք :

Եւ որովհետեւ մեր բարքերէն բոլորովին վտարուած չէին տգիտութեան ու ստրկութեան անցուցած միքրոպները , ընդհանուր վէճերու մէջ մոռցանք շատ անգամ ամէն արժանապատուութիւն և անխնայ իրարու դէմ գոքձածեցինք ամէն տեսակ զէնք :

Մամուլը , մեր արտասահմանեան լրագրութիւնը , որ հայ մտքի իբր բարձրագոյն ներկայացուցիչ , ճշմարիտ ուղեցոյցը պիտի ըլլար ժողովրդին , ինքն ալ իբրեւ արժանաւոր զաւակ իր ժամանակին ու իր միջավայրին , ընդհանուր գեղոհութենէն , քրննադատելու , բամբասելու , քոնդելու տենչէն բռնուած աւելի և աւելի աղմկեց հրապարակը , և ժողովուրդը առաջնորդեց անոր յուշումներէ անորոշութիւն :

Ու այսօր իրաւամբ ընդհանուր գանգատ մը , ուժգին բողոք մը կը բարձրանայ շատ մը տեղերէ մամուլին բռնած այս բացասական ուղղութեան դէմ : Եւ պակաս չեն նոյն իսկ ծայրագոյն յոռետեսներ , որ ալ յուսահատած բարբարոս ազգեցութիւն մը նպասելէ անկէ , կը փափաքին որ անմիջական կերպով լռէր ան , և կամ անոր սանձարձակ ազատութիւնը սեղմուէր խիստ գրաքրննութեան մը կտրատումն րովը : Մամուլը ինքն ալ զգացած է

իր պակասը . և պարբերաբար յանցաւոր տղու մը պէս խոստումներ կընէ խելօք կենալու . և սակայն երկու օր չանցնիր , նորէն իր հին ճամբան կը վերսկսի , աւելի կատաղի և աւելի ինքնամոռ :

Ընդունելով մէկտեղ մամուլի դէմ յայտնուած այդ բողոքին իրաւացի ըլլալը , սակայն չի պիտի փափաքէի բնաւ որ անոր ամենայնպէս , և ամենապատանք կայացուցիչն անգամ դադարէր և կամ սեղմուէր արտաքին ու էճնշումով մը :

Փխանձական փուլ մըն է որ կանցունենք , և ընական օրէնքով պարտաւոր ենք կրել անոր բոլոր հետեւանքները :

Մամուլ մը մեր այս վիճակին մէջ՝ խաղաղ , համակերպող ու լայկան մութացիկ ուղղութեամբ մը յայտարար նշանք պիտի ըլլար ժողովրդին մէջ ամէն ձրգտում , ամէն բաղձանք սառած ու մեռած ըլլալուն :

Ուրեմն մեր ապագայ բարօրութեան , մեր երազներու իրականացման համար պէտք տպրիան , պէտք է շարունակէ իր մտրակող ուղղութիւնը :

Մեր պակասը հոն է միայն որ իրարու հետ կը շփոթենք անաչառ քննադատութիւնը ու անպատկառ հայհոյութիւնը , գաղափարի համար մղուած պայքարը առանձնական հացի կուր , և ամբողջ մամուլը առհասարակ մէկ ջուրով կը լուանք :

Յարմար կը սեպեմ այս առթիւ հրատարակել ստորեւ յօդուած մը «Կուր» խորագրով , ինձի ուղղուած բարեկամական նամակէ մը քաղելով , ուր այնքան լայնօրէն կը խօսուի յառաջդիմութեան անհրաժեշտ ծնունդն եղող պայքարի մասին :

Ուզենք չուզենք , քանի որ մեռած և կամ քարացած չենք , որչափ ալ համբարաշխ ու թելադրիչ ճամբայ մը բռնելու աշխատինք պիտի շարունակուի այդ կուր , և որուն մէջ հետզհետէ պիտի իյնան բոլոր ապկարներն ու վարձկանները : Եւ որպէս զի գաղափարի մար-

դը աւելի շուտով տանի իր յաղթանակը , պէտք է որոշենք անոր մղած փրկարար ու սուրբ կուրը , և չը շփոթենք զանի փոլոցային և գռեհիկ վէճերու հետ :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԿՈՒԻՒՇ

Աշխարհիս վրայ չի կայ բան մը որ անփոփոխ և անալլալելի մնայ :

Անցեալը կը մեռնի , անոր կը յաջորդէ ներկան՝ բոլորովին կերպարանափոխուած : Ամէն ինչ որ կայ բնութեան մէջ , իրերն ու անձերը , ինչպէս նաեւ մեր մտածումները , մեր բարքերն ու սովորութիւնները ամէն ժամ կը դիմեն դէպի կատարելագործութիւն , եւ թակալ են փոփոխման անողոք օրէնքին որ ուրիշ բացատրութեամբ կը կոչուի յառաջդիմութիւն :

Երէկուանը թերի է այսօրուանին մօտ , իսկ վաղուանը աւելի տարբեր , աւելի կատարեալ է քան այսօրուանը :

Այն որ գեռ երէկ հասարակութեան մը համար բացարձակ ճշմարտութիւն էր , այսօր կը նայիս սկսեր է վիճելի դառնալ , կասկածի տակ մնալ : Որքան միտքը կը յառաջդիմէ , կենանք ալ անոր հետ կենթարկուի նորանոր փոփոխութեանց :

Ինչ որ ծերերը լաւ ու կատարեալ կը սեպէին երբեմն , նոյնը երիտասարդ ուղեղ մը նեղ ու անբաւական կը գտնէ :

Որքան ալ ճակատագրական փոփոխութիւնը կատարուի , որքան ալ գիտութիւնը մեր աչքերը բանայ , հիներուն թերութիւնները , նախապաշարունակները մատնանիչ ընէ , ու բոլորովին նոր ճամբայ մը ցոյց տայ մեզի , դարձեալ երէկուան ուղեղով մարդը պիտի կապուած աւանդականին , հեշտութեամբ տեղի չի տար բնաւ , չի կրնար հրաժարիլ իր կանխակալ կարծիքներէն , ու իր բոլոր կատարութեամբը կը

յարձակի նորահաս երիտասարդութեան վրայ՝ որ, ժամանակակից ձգտումներով, աւելի լայն պահանջներով զինուած, իր կարգին կռիւ կը յայտարարէ հնացած, լծացած կեանքին դէմ և կուզէ փոփոխել, ու մինչև իսկ ոչնչացնել ամէն ինչ որ արդեւ կը հանդիսանայ իր յառաջդիմութեան:

Ու ահա կռիւը ստեղծուեցաւ, հինին ու նորին կռիւը որ միշտ եղբէր է ու պիտի ըլլայ: Ան է անհրաժեշտ արգիւնքը մեր յաւերժանական շարժումին, ան պիտի ըլլայ միշտ պատճառը մեր ապագայ յառաջդիմութեան: Ոչ մէկ ուժ կրնայ ասոր առաջին առնել: Անգամ մը որ հին դրութիւնը նոր կեանքին գոհացում տալու անբաւական դառնայ, դժգոհութիւնը կը ծնի նորերու սրտին մէջ: Խուլ բողոքի նշանները կամաց կամաց բացայայտ կը տեսնուին ամէն կողմ. դէպի առաջ ձգտելու, նոր պահանջներ գոհացնելու ցանկութիւնը կարծնայ, հնացած կարգերն ու օրէնքները սխալ, անբաւական կը թուին, երիտասարդութիւնը կը շարժի, ոտքի ելլել կը փորձէ և իր թոյլ ուժերով ճիգ կընէ իր իրաւունքները ճանչցնելու:

Ու ահա գաղտնիք արական կռիւը կը սաստկանայ: Հիները՝ վրդովուած իրենց հանգստութեան մէջ, կը յուզուին, կը գայթակղին ու ամէն զէնք, ամէն միջոց օրինաւոր կը համարին ճշմարտ համար նորերը, «խուլվարար ճահիլները», որոնք կուզեն առաջիններուն ձեռքէն

խլել ամէն իշխանութիւն, ամէն գործի ղեկավարութիւն: Նոր կերպարանք կառնէ կռիւը, բուն, անխնայ: Գեռ մեծերուն կողմն է բիրտ ուժը: Անոնցն է դիրքը, գրամը, ազդեցութիւնը, վարձկան, փողոցային մամուլը: Ուստի իրենց համար դժուար չըլլար առջի բերան դապիլ, կասեցնել ամէն խլրտում, ամէն շարժում:

Բայց կռիւը չի դադարի բոլորովին: Նորերուն մէջ կը զբաղուին ըմբոստ, անզուսպ հոգիներ, խիզախ, յանդուգն բնատրութիւններ սրունք կուրծ կուտան ամէն արգելքի, կը դիմադրեն ամէն կեղտոտութեան: Մարդկութիւնը անոնց կը պարտի իր յառաջդիմութիւնը: Հաւածանքը չափ չունի այս խրոխտ վերանորոգչներուն դէմ: Տարիքով ու մարդով հիները իրենց բոլոր պնակալէզ արբանեակներով, ալ ու ձախ արշաւանք կը մղեն որպէս զի դադարեցնեն նոր հոտանքը որ սակայն ուշ կամ կանուխ կը փշրէ հնութեան բոլոր պատուարները, որքան ալ ամուր հաստատուած ըլլան անոնք:

Կռիւը կը շարունակուի, հոսանքը ստեղծող ափ մը նոր մարդիկը կը նախատուին, կը հալածուին ու փերջապէս զոհ կերթան կոյր ատելութեան, խաւար նախապաշարմունքի... Այդ գոհերուն կը յաջորդեն սակայն ուրիշ հետեւորդներ որոնք՝ աւելի քան իրենց նախորդները, մոլեռանդաբար կը պաշտպանեն նոր գաղափարները, մինչև որ իրենց թիւը երթալով կաճի,

կըստուարանայ, մինչև որ կը հասկցուի լաւ մը թէ հինին տիրապետութիւնը անհանդուրժելի է ալ եւս:

Կռիւը կը վերսկսի իր ծայրագոյն աստիճանին հասած: Այս անգամ հիներու ահոտ թափթը փած է սակայն, և վաճ իրենց, եթէ տեղի չիտան:

Նոր պահանջներով առաջ կանցնի նոր երիտասարդութիւնը որուն ուժին ոչինչ կրնայ ալ եւս դիմադրել, առանց ծաղր ու ծանակ ըլլալու աստիճան փըշրուելու:

Նորը կը յաղթանակէ: Հոգեվարք հնութիւնը կը մուտայ անոր ետեւէն, բայց ի զուրբ...

«Ձի լուսինը բակ բոլորած շարունակում է իր ճամբան, Համարելով թէ չի լուսմ որ իր վրայ հասնուցնել կանո»:

Հին գրութեան, հին բարբաբուն կը յաջորդեն նորերը: Առաջ կը քայլէ երիտասարդութիւնը, մինչև որ ինքն ալ իր կարգին հիննայ և իրեն յաջորդէ ուրիշ նոր կեանք, նոր շարժում, նոր... կռիւ:

ՇԱՀՐԻՄԱՆ

Ֆիլիպէ, 17 Յուլիս

ՄԱՍՈՒՆԻ ՅՈՒՐԶԸ

Նախորդ անգամ մեր «Մամուլի Շուրջը» հապճեպ պտոյտին մէջ մատնանիշ ըրինք արտասահմանի հայ գրական կեանքի տխուր ամուլութիւնը: Ընթերցող թերեւս մտքէն անցուց որ մոռցած ըլլանք, այդ ա-

կենցաղագիտութիւն կուգան ձեւել, չափել իր բարբերը, զգացումները, շարժումները, և զսպիւլ, գառազեղել բնութեան զուազը, բնազդական կըքոտ կենդանին: Առաջին պատմական մարդը որուն կը հանդիպինք հազարաւոր դարերու գործը կը ներկայացնէ, քանի որ զմեզ աշխարհի սկիզբէն բաժնող անհուն հեռաւորութիւնը տարակոյտով լի ստուերով մը միայն կը լուսաւորէ մարդուն ծագումը:

Կենդանի մը ապրելու համար պէտք է իր միջավայրին յարմարի, իր ապրած կլիմային, առած սնունդին ու պէտքերուն: համեմատ կը շնչէ, կը կերակրուի ու կը շարժի, և տարբեր միջավայր մը տարբեր պէտքեր, հետեւաբար գործունէութեան տարբեր ձեւեր սովորութիւններ ու բնազդներ կը ծնի իր մէջ, և տարբեր նկարագիր մը ու խառնուածք մը կուտայ իրեն, այնքան աւելի հաստատ ու ամուր որքան արտաքին սպաւորութիւնները խոր եղած են ու հնագոյն ժառանգականութեամբ մը կազմուածքին հետ նոյնացած: Երբ դիտենք անհատի մը կամ ազգի մը կարողութեանց և զայն կառավարող բնազդներուն ամբողջութիւնը, իսկոյն պիտի գտնենք իր բնութեան և շրջապատող պարագաներուն հսկայական ճնշումը: Այնպէս որ, նոյն խմորը, որ կլիմային տակ, իր միջավայրէն ընդունած զանազան ճնշումներուն համեմատ, տարբեր արդիւնքներ կու-

մայութեան քովէն քալող մեր կիսաշարժական ու պարբերական առատ հրատարակութիւնները:

Ձէ թէ չեմ մոռցած զանի, այլ կուզեմ այս անգամ յատկապէս այդ երկրորդ սխուր երեւոյթին վրայ խօսիլ:

Տխուր կըսեմ այդ երեւոյթին համար, չը պիտի վարանիմ նաև հիւանդոտ ալ ըսելու, որովհետեւ, ատոնց մեծ մասը որ ուղղակի ժողովուրդին պէտքէն, ժամանակի պահանջէն չի ծնիր, չզաճական, մաղձոտ բան մը ունի իր մէջը, և հետո ընթերցողին հայթայթելէ առողջ ու կազդուրիչ սնունդ մը, պարզապէս կըքի գրականութիւն մըն է որ կը մշակէ:

Լրագրական հրատարակութեանց առատութեան դիմաց, ընթերցողներու փոքրիկ թիւը, անկարող գոհացնելու ամէնքը մէկանց, և գարձեալ ընդհանուր խառնափոխութեան մէջ շուտարած, ձեռք կը քայլէ ամէնքէն ալ, և թող կուտայ որ իրապէս օգտակար եղողներն, արժանիք ունեցողներն ալ ոչնչանան, անսեսուին ընդհանուր փուլզուլի մէջ:

Այս ըսածներս ոչ վարկպարագի ենթադրութիւններ են և ոչ ալ ինքնահնար կեղծիք, գանգաւոր ընդհանուր է անոնց դէմ, և արդիւնք, թերթերը վաղանցիկ կեանքի մը համար իրարու ետեւէ կը ծնին ու կը մեռնին, և այսօր մեր պարբերական հրատարակութիւններէն ոմանք քանի մը ամսուան թերթեր կը պարտին, և Աստուած գիտէ ժամանակին թերթի հասցնողներն ալ որչափ նեղուցիկ են ու զբաւական տալու կը քայլեն: Խօսքը չեմ ընել անոնց որ իրենց կեանքը քաջքնիչու համար օրը օրին անուն, գոյն ու կղանակ կը փոխեն:

Եւ ո՞վ է մեղաւորը ասոր մէջ, գործը որ աւելի իր անձնական հաշիւներէն ու հակուսիներէն առաջնորդուած, անկարող է իր ետեւէն քա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՏՅԻՐ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ՄԱՐԳ

ԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԻՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա.

Մարդ էակը չի կրնար ներկային ոլորտներուն մէջ փակուիլ ու լուկ անով գոհանալ: Անիկա կը դիմէ դէպի ապագան անգաղութիւնը ըզձանքներով, որուն կը ձգտի կապել իր զարգացումը գոյութիւնը, և ուր կուզէ փոխադրել կարծես իր անհատականութեան լաւագոյն բաժինը իրեն նպատակ մը պէտք է զայն սիրելու և անոր հետեւելու համար: յոյս մը՝ որ զինքը պաշտպանէ ու առաջ մղէ բարեբար ու յաջող հովի մը նման: Ու երբ այդ մղումը պակսի, մարդը կանգ կառնէ, կը կքի, կը սմբի, ինքն իր վրայ կը փլի, անհղբ ուղիքանսին մեղմութեան մէջ յանկարծակի անդորր ու խաղաղ օդի մը հանդիպող նաև ուն առաքատիւն պէս: Անհատները, ժողովուրդները, մարդկութիւնն համայն կը հնազանդին հաւատարմապէս այս խորհրդաւոր բնազդին, որ անոնց ցոյց կուտայ թէ՛ բարոյական, ինչպէս ֆիզիքական աշխարհի մէջ, անշարժութիւնը մահ է և շարժումը կեանք: Ի՞նչ է այդ մղումը կամ ի՞նչ պէտք է ըլլայ, որոնք են զայն ուղղող,

կազմող և զարգացնող ազդակները, կամ խափանող, այլաձեւող արգելքները, որոնք են այն անհրաժեշտ պայմանները որոնց պէտք էնի անուճանալու համար:

Մարդ այդ մղումը կը ստանայ իր բնութեան, իր սպրած միջավայրին և գործած վայրկեանին ազդեցութեան տակ: Ինչ որ բնութիւն կը կոչենք մարդուն մէջ, բուն իսկ մարդն է քաղաքակրթութեան ու մշակութեան բոլոր կերպարանափոխութիւններէն մերկացուած, իր սկզբնական վիճակին մէջ, իր կոյր կրթութեան ու անասնական բնազդներուն ետեւեւորը բորբոքուն: Այսօրուան մարդը բոլորովին կերպարանափոխուած է, և իր բնականը՝ քաղաքակրթութեան շարժումն և ճնշումներուն մէջ կաշկանդուած: Բայց երբէք չէ անհետացած ան, ու երբ անգամ մը անցեալին կապերը խզես, աւանդութեան ու սովորութեան լարերը կտրես, ինչպէս ժեզարուն վերածնութեան շրջանին, սկզբնական մարդը իսկոյն կը յայտնուի իր բնական բոլոր յատկութիւններով:

Գրեթէ միշտ, երբ նոր սերունդ մը իր արբուներին կը հասնի և կը սկսի ինքզինքին դիտակցութիւնն ունենալ, կը հանդիպի անհատուճ պատմութեան օրինադրքի մը որ իր վրայ կը ճնշէ անցեալին բոլոր ծանրութեամբ ու հեղինակութիւնովը: Անհամար շղթաներ, հոգար սեռակ կապեր, կրօնք, բարոյական

տայ, և իր զարգացման պայման ունի իր նախորդը՝ որուն մահէն կը ծնի: Այսպէս ծնած են ու կը ծնին պատմական մեծ հոտանքները: այսինքն մտածման որոշ ձեւի մը կամ դադափարի մը երկար սերտապետութիւնը: Մարդիկ 500 տարի իտէալ մը յղացած են—օրինակի համար Միջին դարուն ասպետը կամ վանակրթեան ամէն մէկ կէտին մէջ երեւցած է ու իր որոշ շրջանը անցնելէ ետքը հետզհետէ մարած, յետոյ մեռած է նորի մը ծնունդ տալով:

Այսպէս է որ կը մեռնին իտէալները, և անոնց հետ, շատ անգամ, ազգութիւնները: «Բայց մեր սղիտութիւնը այնքան խորունկ և մեր հպարտութիւնը այնքան մեծ է որ, կըսէ Տարվին, երբ գործարանաւոր էակի մը ջնջման լուրը կառնենք, իսկոյն, ա՛նգղիս գոռում գոչումներով կը սկսինք աշխարհը իրար անցնել, և խենթուկ օրէնքներ հնարել կենդանի ձեւերու սեւողութեան վրայ»:

Արդ ինչպէս կը տեսնուի իտէալ միակ անհատի մը յղացումը չէ, այլ բազմաթիւ սերունդներու և անհամար դարերու ընթացքին մէջ ամբողջ ցեղի մը արտադրած հուսկ պտուղը: «Արուեստը, բանաստեղծութիւնը, բարոյականութիւնը, մարդկային մտքին այս ամենէն այլազան արտայայտութիւնները, կըսէ Ռիպո իր ժամանակակիցութիւնը գրքին մէջ, կը նմանին մեծազին ու փափուկ տունկի

չելու ընթացողներու գոհացուցիչ բանակ մը . թէ ժողովուրդը . որ տարբեր կուսակցութեանց մէջ պատան ապստամբ եղած . վերջապէս ճարտար կը ստիպուի ձեռք քաշել անհէն ալ :

Թերեւս երկուքն ալ մեղաւոր են համահաւասար չափով :

Եւ որովհետեւ լոկ բազմաք մը . անհատական բարի կամեցողութիւն մը բաւական չէ այս շարիքին առաջին առնելու . մեղքերնիս է պիտի քաշենք . սպասելով որ է որ նոր թերթերու եւ նոր հանդէսներու ծագելուն ու մարելուն . մինչեւ որ միացողներն ու տոկացողները ժամանակին հետ թօթուելով իրենց ցաւազար գալարուները . մեղի բնիկ աւելի ուժեղ եւ աւելի կենսունակ ներթեր . ուստի կը բաւականամ առայժմ այս ընդհանուր սեռութիւնով . յաջորդ անգամ խոստանալով գրել անոնց . նորերու մասին փոքրիկ նկատողութիւններ :

ԵՐՈՒԱԶ

ՀԱՅԵՐՈՒՆ ՊԱՐԿԸ ԶԻՆՈՒ ՍԷՂ

Փրանսացի երկրախոյզ Պ. Պօնէն . որ կեդրոնական Ասիայէն վերադարձին էջմիածին այցելեց . յայտարարած է Արարատի խմբագիրներուն թէ՛ իր խուլարկութեանց համաձայն . բազմաթիւ հայ միսիօնարներ կը գտնուէին այն նաստորականներուն հետ . որոնք առեւտր ձեւ տարանը քարոզեցին կեդրոնական Ասիա եւ Զինատանի խորհրդը :

Թուփա-Չէնկի մէջ . նաստորական ամենէն հին գաղթականութիւններէն մէկը . Մոնկոլիոյ եւ Զինատանի սահմաններուն վրայ . Սինիքի եւ Թանց-Քարի մէջ շտեղ վը գտնուէր հայ գաղթականութիւններ :

Թիւն մը մինչեւ սա վերջին տարիներս :

Ամերիկացի զբօսաշրջիկ մը . այսօր հիւպատոս Յունաստանի մէջ . հոն տեսած է այդ հայերը 1894ին . Թուփա-Չէնկ 1895ին կործանեցաւ բնիկ իսլամներու ձեռքով . որոնք շարքեցին հոն եղած բոլոր հայերը :

Պ. Պօնէն որ այդ աւերակ քաղաքը այցելած է . կը մտածէ թէ հայերը հոն գաղթած են նաստորական հին միսիօնարներուն հետ :

Հայերը գեթ Յոգ գարուն . նշանաւոր վանք մը ունէին Իսաբ-Քուլ լճին հիւսիսային կողմը . ոչ հեռու ուսական սահմանագլխէն : Աւանդութեան համաձայն հոն կը պահուէր Մատթէոս սուրբալին մարմինը :

Այս վանքը շիման մէջ գրած է քրիստոնէութիւնը Պատարականութեան հետ . եւ այս շիմանէն ծնած է Լամաներու կրօնքը . որ է ապէս պատարական է . քրիստոնէութենէ փոխ առնուած արարողութիւններով . Լամաներու կրօնքին թիպէթցի հիմնադիրը այցելած է Իսաբ-Քուլի մենաստանը . որ յետոյ աւերեցաւ հաւանականաբար թիմուրլէնկի արշաւանքի միջոցին :

ԼԱՌՈՒՆԻ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Անցած շաբթու պատուարժան խմբագրութեանը ուղղարկած նամակովս հոս պարտած լուրի մը արձագանքը ձեռքի հաղորդած էի . այս անգամ տեղւոյս քահանային

մեզ ուղած նամակէն եւ եկեղեցիին անտուկի տետրակին պարունակութեանը մօտէն ծանօթ անձի մը ինծի տուած ստոյգ տեղեկութիւններէն լուսաւորուած . կողմ խնդիրը լուսարանել . նուագահանգէսը անցած տարի Մայիս ամսուան մէջ տրուած էր եւ ինչպէս քահանայ իր նամակին մէջ գրած է . նուագահանգէսին յանձնաժողովը Դեկտ. 4ին կրցեր է իր հաշուեցուցակը թաղ. խորհրդին ներկայացնել . ստոր ալ պատճառը սա է թէ յանձնաժողովը յոյս ունի եղեր որ քահանային իր գանձած գրամը պիտի վերադարձնէ . բայց երբ կը տեսնէ թէ քահանայն անտարբեր կը մնայ կոր . ան ժամանակ կըստիպուի հաշուեցուցակ ներկայացնել . եւ չի կարծէք թէ յանձնաժողովը 54,50 Փրանք թաղ. խորհրդին կանխիկ գրամ կը յանձնէ—այդ գրամը եթէ երբէք իր ձեռքը անցած ըլլար 55 ոսկիին պէս անշուշտ անմիջապէս պատրիարքարան զրոյսով պիտի ըլլար—այլ նախորդ նամակին մէջ գրածիս պէս թաղ. խորհրդին վրայ կը ձգէ քահանայէն այդ գրամը գանձելու գծուարութիւնը եւ որովհետեւ նախորդ թաղ. խորհրդոյ անդամներէն ամենաազդեցիկ եւ կուշտ փոր ազա մը շուղեք քահանային անհաճոյ երեւնալ այդ գրամը գանձելու հոգն ստանձնելով . իր ընկերները կը համոզէ եւ առանց խորհմանքի սովամահ սրբերու իրաւունքը . 54,50 Փր. . ինչպէս որ քահանայն իր նամակին մէջ գրած էր . անտուկի տետրակին 18րդ է-

ջին մէջ եկեղեցւոյ հասոյթ կը նշանակուի եւ ինչպէս նաեւ քահանայն մոռցած էր գրել . այդ տետրակին միւս էջին մէջ ալ քահանային ամսականի փոխարէն յանձնուած գրամ 54,50 կարճանագրուի : Եթէ քահանայն մաղի չափ զգացում ունենար . ամէն շաբթի գործ գնելով այդ գրամը որ 4—5 ամիս կողորդը մնալէ վերջ թաղ. խորհրդոյ թուլութեանը շնորհիւ իր ամսականին սեպուած էր . առաջին անգամ ամսական ստանալուն պէս պէտք էր ուղղարկէր ուր որ անկէ : Այս խնդրին մէջ եթէ զարմանալու բան մը կայ նուագահանգէսի յանձնաժողովին թաղ. խորհրդոյ բռնած ընթացքին հանդէպ ձայն բաղձրացուցած չըլլալն է . կը յուսանք որ նոր ընտրուած թաղականները պիտի ջանան այդ գրամը ժամ առաջ իր անտուկին հասցնելու :

Երկու նամակներուն պարունակութենէն կրցաք հասկնալ թէ մեր քահանայի անխղճութիւնը որ աստիճանին հասած է . թոյլատուութիւն ըրէք որ քանի մը սող ալ իր հարուստասիրութեան եւ ծուլութեանը վրայ գրեմ . ինչպէս յայտնի է միլիպէի մէջ ալ նոյն միջոցին վիճակահանութիւն մը կատարուելու վրայ էր . այդ վիճակահանութիւնը կարգադրող միլիպէյի վաճառականներէն մէկ երկուքը մեր քահանային 100 Փրանքի վիճակահանութեան տոմս կը զրկեն որ հոս ծախէ . կարծելով թէ այսչափ ազնիւ նպատակի մը համար քահանայն չի պիտի զլանայ պէտք եղած

մը . որ շատ ուշ ըրողով արձակած է . եւ պտուղ տուած է միայն շնորհիւ անհամար սերունդներու երկար աշխատանքին : Իտէալը մէկ անգամէն զի զարգանար . այլ թիչ թիչ :

Բայց ո՞ր պիտի կանգ առնէ վերջապէս այս տիեզերական շարժումը . որ մարդկային ամէն գործերու յարակից է Յատաղիմութիւն մըն է ան . անկուս մը . թէ անվերջ ու աննպատակ շարժում մը . յոռի շրջան մը . որ ամէն բան յաւիտենական նոյն մեկնակէտին պիտի հասցնէ : Ահա այն հարցը զոր լուծել կը տքնի ժամանակակից դիտութիւնը . Յանկուլի լուծում . եթէ անիկա կարողանայ մարդկութիւնը ազատել իր տաճանի խարխափումէն եւ ցոյց տար անոր վերջապէս իր ընթանալիք ճամբան :

Երբ բազմ մեզի կը ժպտի . երբ մեր մարմինն ու հոգին իրենց ուժերուն գերագոյն փթթումին մէջ կը գտնուին . երբ երանաւետ յոյս մը մեր սիրտը պարուրելով մինչեւ ուղիւ կը հասնի . ինչպէս կենսատու հիւթը մինչեւ ծառը . այն ատեն դիտութեամբ կը հաւատանք յատաղիմութեան որ մեր ուժերն քանակաւ արդիւնքն է . եւ մեր իսկ անձնական սպաւորութեանց գունապեղ յոյս տուող : Բայց թող ժամանակը քայլ մըն ալ առնէ . թող բազմին անիւր

դառնայ անգամ մը . թող վերջապէս ստուերները հետզհետէ սկսին երկարաձգել մեր կեանքին այլեւս ամպոտ հորիզոնին վրայ . ու ահա պատրանքը կը դարձի . անողոք իրականութեան մը ժահրը կը պատէ զմեզ . քաղցնի յարակիցին սորսուտները կը սկսին վիճատուել մեր հոգին . եւ մեր բազդին եւ ուժերուն անկումը կարծես կը հազարդուի մեզի շրջապատող ամէն իրերուն : Ամենապարզ փոփոխութիւն մը բաւական կըլլայ այսպէս մեր խանգալաւթութիւնը դառնութեան ու վիճատութեան փոխելու :

Ժողովուրդներու կեանքին մէջ ալ նմանօրինակ բան մը տեղի կուենանայ . որոնք անհատներու պէս իրենց երիտասարդութիւնը . անտութիւնը եւ անկումը ունին : Հոն ալ հեռապատկերը կը փոխուի . երբ անոնց բարձրացման կամ անկումի վայրկեանները կը քննենք : Ու մարդկային յատաղիմութեան խնդիրը միշտ անորոշ պիտի մնար . եթէ զայն լուծելու համար անկումի ու վերաբուականի ուժի այս յաւիտենական alternativeները նկատէինք միայն :

Բայց . տեւական յատաղիմութեան գաղափարը ըմբռնել կարենալու համար . պէտք է աւելի բարձրէն դիտուել . եւ մարդկութիւնը իր ամբողջութեան մէջ միակ անձ մը նկատուել . որ . Բասքալի խօսքով . «միշտ կը սուրվի ու երբեք չի մոռնիր» : «Այնպէս նստուած ու երկու ան .

հոնութեանց մէջ կորսուած . կը գրէ Բասքալ . մարդ չի կրնար միջոցէն ու իր տեսողութենէն դուրս ելլել . ուր աննշմարելի կէտ մը միայն կը գրաւէ : Իր ամբողջ արժանիքը մտածման մէջ է . անով կը տիրէ բնութեան . եւ անչեղալը ապագային կապելով . իր գոյութիւնը բեղուն ու յարատեւ կը դարձնէ . անով կրնայ միշտ սորվել ու անդադար կատարելագործուիլ : Արդ . որովհետեւ էակի մը երջանկութիւնը իր կատարելութեան անբաժան է . լուս մտածելու աշխատիլը երջանկութեան ու միանգամայն բարոյականի սկզբունքն է : Ուստի եւ ճշմարիտ յատաղիմութիւնը կը կայանայ հոգեւոյն միտին վրայ . մտածման նշխարական աշխարհին վրայ ունեցած յարաձուռ տիրապետութեան մէջ :

Ոչ ոք ապահովապէս . բացի քանի մը այլատեսութեամբ արարածներէ . պիտի ուզէ այս սկզբունքին հակառակիլ . եւ մարդկութեան ապագան միտի եւ արիւնքի վաղ անցուկ գրախափ մը մէջ փնտռել :

Այնպէս ինչ մէջ . սակայն . ապահովութեւ համար հոգեւոյն յաղթանակը միտին վրայ . մտածութեանը ներքին եւ բարիքինը . շարին վրայ . — որով միայն մարդ երջանիկ կրնայ ըլլալ— երկու տարբեր ու գրեթէ հակառակ ուղղութիւններ կը գործ . ծուրն . որոնց իւրաքանչիւրը իր կարգին կը ձգնի առանձնապէս ձեռք անցընել մարդկութեան բարոյական ուղղութիւնը :

Անոնցմէ մէկը . մէկ կողմէ բարոյական օրէնքներու սրբութեան . եւ միւս կողմէ մարդկային բնութեան գեթազգաբար անվիճելիօրէն գէշ ու ստորին բնագոյններուն վրայ յենած . ինչպէս կըսեն իր կուսակիցները . կուզէ միտքերը կուսակալել կամ կրթել ճշուժով . պատիժով . ստիպումով . սարսափով . մէկ խօսքով արտաքինէն ներքինին անցնելով : Անոնք չեն ուզեր մարդկային ազատութիւնը ընդունիլ . եւ եթէ յառաջդիմութեան թշնամի չեն . ապահովաբար երբեք չեն ախորժիր այդ անուսէն : Այսպէս է կրօնական դաստիարակութիւնը :

Միւսը . ընդունելով մարդկային ազատութիւնը . կը հիմնուի մարդկային մտքին ու հոգեւոյն կարողութեանց ուժերն վրայ . եւ կը թողու որ անհատը իր անձնական փորձառութեամբ իսկ ճանչնայ զինքը շրջապատող արտաքին աշխարհը . քննէ երեւոյթները . իրերը . որոնք բարին ու յարը ոչ թէ վարդապետական օրէնքի մը կամ բնագոյնական սկզբունքի մը համեմատ . այլ անոնց իր եւ իր նմաններուն հետ ունեցած յարաբերութեանց եւ բնական օրէնքներու հետ բողոքատութեամբ : Այսպէս է գիտական դաստիարակութիւնը :

Քննենք հիմայ մտքին դերը մարդկային յատաղիմութեան մէջ այս երկու սխալմաներուն բողոքատութեամբ : ԼԵՒՈՆ ՍՍՐԳԻՍԵԱՆ  
Ֆիլիպէ . 20 Յուլիս

յոգնութիւնը յանձն առնել : Գահանան այդ տոմսերը ստանալուն պէս կը սկսի մտածել, ո՞վ պիտի յոգնի անդին ասդին երթայ այս տոմսերուն համար, բայց միւս կողմէն ալ այդ տոմսերը վերագարձնել անկարելի էր, զրկողները հարուստ վաճառականներ էին և ամէն պարագայի մէջ քահանան պէտք էր անոնց շնորհակալութեանը արժանանար : Այդ միջոցին նախկին թաղ. խորհրդոյ ամենաազգեցիկ անդամը կերթայ կը գտնայ, և որովհետեւ եթէ քահանան այդ տոմսերը ժողովրդին ծախելու ձանձրութիւնը յանձն առած ըլլար, այդ վերջինն ալ պէտք էր քանի մը տոմս գնել կը մտածեն և կորոշեն որ քահանան այդ տոմսերուն արժէքը եղող 100 ֆրանքը՝ քօնսէրի հասոյթէն վճարէ և աստիկ ալ կընէ, ահա ինչպէս քահանային ծուլութեանը շնորհիւ մեր որբերը 100 ֆրանքէն ալ զրկուեցան :

ՈՄՆ

Սօֆիա, 20 Յուլիս

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսոյ հայ թերթերուն մէջ կը կարդանք :

«Հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ աւազակապետ Անդրանիկի հրամանին տակ գտնուող աւազակներ, որոնք Սասունի շրջակայքները երեւան ելած էին, իրենց ետեւէն զրկուած զօրքերու կողմէ՛ն ձերբակալուեր են : Աւազակները հսկողութեան տակ Սասուն տարուեր են : Տեղացիները շնորհակալութեան գիր մը մատուցեցին իշխանութեանց » :

Ինչպէս կերելի և չլիւր-Սերբի յաջորդ Անդրանիկի խումբի մասին է : Աւելի որոշ և ստոյգ մանրամասնութիւններ կը սպասենք մեր Պոլսոյ թղթակցէն և «Իրօջակէն» :

— Վանայ հոգեւոր հովիտներուս եպիսկոպոս իր առողջական վիճակը պատճառ բռնելով վերջնականապէս հրաժարեց է պաշտօնէն : և հեռագրեր է պատրիարքարան թէ արդէն ճամբայ ելած է Պոլիս գալու համար :

— Բարեյիշատակ Գ. Ջանչեանց 1897էն սկսելով մինչեւ իր մահը 7500 ոսկիէն աւելի գումար մը յանձնած է եղեր Պատրիարքարանի արամագրութեան, որբերը և կարօտեալները խնամելու համար :

Ականջը խօսի մեր միլիոնատէրերուն :

— Եւրոպայի այցելու հովիտ Գեորգ եպիսկոպոս, ալ ձանձրացած Բարիզէն Մարսիլիա երթալ գալէն, Բարիզէն անցեր է Մանչեսթըր :

Կըսուի թէ Բարիզի մէջ հայկական մատուռ մը կանգնելու

խորհուրդը նորէն շուրն ինկեր է :

— Խմբագրութեան մէջ ընդունուած են Վենետիկէն, «Բնաշխարհիկ բառարան»ին երկրորդ պրակը, Բարիզէն՝ Պատմաճեանի «Բանասէր»ին Բ. տարւոյ Ա. գիրքը, և քաղաքէն՝ Պօնտոպոլսի Լինթերցարանին Բ. տարին :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Բէքինէն թայմզի ինքնակիցը կը գրէ Յուլիս 8/21 թուականով :

«Յուլիս 18 (Ն. Տ.)էն ի վեր դադարած ենք գործողութենէ : Չինական զօրքերը պատնէշներով կը զօրանան մեր շուրջը և դադարած են կրակ ընելէ, թեւեւ ուղիւմթերի պակասութեանէն :

«Կայսերական զօրքերու զըլխաւոր մասը մեկնած է Բէքինէն գիմաւորելու համար առաջացող դաշնակից զինուորները :

«Պաշար սկսած է գալ և մեր վիճակը բարձրացած է : վերաւորները ազէկնալու վրայ են : հիւանդանոցը լաւ վիճակի մէջ է :

«Չինական կառավարութիւնը գիմած է թագուհոյն՝ անոր օգնութիւն խնդրելով ներկայ վիճակէն ազատուելու համար : Թագուհոյն պատասխանը չենք գիտեր : բայց այս գիմումէն օր մը առաջ կայսերական հրովարտակ մը հրաւեր կը կարդար պօքսէրներուն շարունակել իրենց հայրենասիրական ձեռնարկը, շարքել բոլոր եւրոպացիները, և կը հրամայէր բոլոր փոխարքաներուն արաքսել օտարները, ձերբակալել Չին քրիստոնեաները և ստիպել զանոնք որ իրենց հաւատքը ուրանան :

«Պօքսէրներուն զլխաւորներն են նախարարներ և իշխաններ :

«Յուլիս 18ին (Ն. Տ.) ուրիշ հրովարտակ մը կը հանէր ասոր բոլորովին հակառակ, որ հետեւանքն էր Թիէն : Չինի գրաւուելուն դաշնակից բանակներէն, և որուն մէջ Գերմանացուց դեսպանին սպանութիւնը կը վերագրէր փողոցի սրիկաններուն, բայց կայսերական սպայի մը ձեռքով եղած ըլլալը հաստատուած է :

«Գեոպանատուները պաշարող զինուորներն իսկ կայսերական զօրագունդին կը պատկանին, և իշխաններու հրամանատարութեան տակ ամէն տեսակ ուժք անխնայ կը տեղան անպաշտպան կանանց և տղայոց վրայ :

«Փրանսական զեսպանատուները աւերակ դարձած է, զեսպանը ապաստանած է Բրիտանական դեսպանատունը :

«Բրիտանական զեսպանատուները այրելու համար մօտը գտնուած Ակադեմիան այրեցին, որ ամե-

նէն նուիրական շէնքն է Չինացիներուն համար : և այսպէս իրենց միակ թանգուրանը մոխիր դարձուցին :

«Չինացիք գրեթէ Մոնկոլական ցեղին յատուկ նենդամիտ քաղաքականութեամբ կը գործեն, մէկ կողմէն յայտարարութիւն կը հանեն քրիստոնեաները պաշտպանելու, և միւս կողմէն յանկարծակի բերելով պանոնք կը շարքեն :

«Գեոպաններն, իրենց պարագայներն և ընդհանուր առողջական վիճակն իս լաւ են :

«Միշտ կը սպասենք օգնութեան » :

— Հարապոզքէն կը հեռագրեն թէ Ռուսաց զօրքերը անցած են Ամուր գետը, Պակովչէնի քիւրի մօտերը եւ միւս բն Չինացիները մեծ փրօս տալով անոնց :

Ռուսները գրաւեցին Սախալին գիւղը և մեծ քանակութեամբ ռազմամթերք ձեռք են անցուցեր :

— Շանկայէն կը հաղորդեն որ Ռուսները պատերազմ մը կորսնցուցեր են Նիու-Չուանկի մօտերը և ստիպուեր են ետ քաշուիլ երկաթուղուց : Մօտ 40,000 Չինացիներ պաշարեցին ուս զօրքերը Թաշիքօֆի (՝) մօտ :

Չինացիները ռաբակոճեցին չորս ուս նաւեր Ամուր գետի վրայ, և այս պատճառով նաւերը աւազի վրայ նստելով շատ փրօսուեր են :

— Նոր հեռագիրները կը տեղեկացնեն թէ Չինացիները թընդանօթներով կամրացնեն բաց նաւահանգիստները, քացեր են մեծ ջրանցքին բերանը որուն հետեւանքով Թիէն-Չինի և Բէքինի մէջ գտնուած երկիրը ուղղուած է :

30,000 պօքսէրներ կը գտնուին Թիէն-Չինէն 8 միլոն հեռաւորութեամբ, պատերազմ մը մօտալուս է :

— Շանկայէն կը հեռագրեն թէ Լի-Չուանկ-Չանկը, Չինացոց մեծագոյն պետական մարզը, անձնասպան եղած է : Բայց այս լուրը դեռ չէ ստուգուած :

### ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիոյ թագաւոր Վիկտոր Էմմանուէլ Գ. հրամայած է որ իր հօրը թագման հանդէսը կատարուի մասոյս 27ին (նախորդ օրը), Հումպէրթօի մարմինը պիտի ամփոփուի Հոմմի Բանթէնին մէջ : Թագաւորը օգոստոս 16ին պիտի կատարէ իր երգումը Երեսփոխանական ժողովին :

— Պարսից Նահը, որ կուլէր Բարիզէն անցնել Լօնտրա, թագուհոյն երկրորդ որդւոյն, Սաքս-Քօպուրկի-Պօթա դուքսին մահուանը առթիւ ետ կեցեր է իր այդ մտադրութեանէն :

— Սերպիոյ Ալեքսանդր թա-

գաւորին ամուսնութիւնը մասոյս 23ին կատարուեր է մեծ շքեղութեամբ, կնքահայրութեամբ Չարին ներկայացուցիչ Մանտրօֆի և Ս. քուրչիւնայի նախագահ Նեստրօֆի :

Ներկայ բազմաթիւ ժողովուրդը խանդավառ կեցցէներով ուղջուներ է թագաւորն և թագուհին :

Եկեղեցւոյ մէջ ներկայ եղեր են ամբողջ զեսպանական մարմինը, նախարարները, հրամանատարները, և այլն :

Պաշտօնական օրկանը կը հրատարակէ արքայական հրովարտակ մը, որով ներում կը շնորհուի շատ մը քաղաքական և այլ յանցաւորներու :

— Ռօպէրթօ կը հեռագրէ օգոստոս 18ին (Ն. Տ.) թէ 1,200 Պօէրնիեր եւ անձնատուր եղած են հրամանատար Հընտըրին, Օրանթի մէջ :

— Հոմմէն կը հեռագրեն թէ 1800 մարդիկ ձերբակալուած են անիշխանականութեան կասկածանքով :

Իտալական ոստիկանութիւնը մեծ կակ դատարարութեան մը հետքերը գտնելու վրայ է :

— Պոլսէն կը գրեն :

Ռոսիականութիւնը նոր խռովարարական յայտարարութիւններ ձեռք անցուց և ասոր հետեւանքով շատ մը մարդիկ ձերբակալուեցան :

### ՀԱՅՎԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՆԵՐՈՒԹԻԿ

ԵՒ ՏԵՐԵԿԵԱՅ

Վարժարանիս աշակերտ աւա փափաքող պատուարժան ծնողաց կը յայտարարեմ որ, Հայկական կրթութեան Գ. տարեշրջանը կսկսի յառաջիկայ սեպտեմբեր 1/14ին, միւսնոյն ընդարձակ եւ օրատուն շէնքին մէջ, առանց փոփոխման ծրագրի եւ աշակցութեամբ միեւնոյն ուսուցչական մարմնոյն, որուն պիտի ընկերանայ նաեւ ֆրանսացի ընդհանուր հսկող մը :

Լրացուցիչ գասընթացքի աշակերտներուն համարուսման առարկաներու մեծագոյն մաս մը պիտի դասախօսուի ֆրանսերէն լեզուով, Դասաւանդութեան միեւնոյն եղանակը, աւելի նեղ սահմանի մէջ եւ աստիճանաբար, ի գործ պիտի գրուի բարձրագոյն ու միջին գասընթացներուն համար ալ :

Ուսմանց ու գիտութեանց բոլոր կարեւոր ճիւղերը կաւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորչ են Պուլկարիէնը եւ Ֆրանսերէնը, իսկ կամաւոր են Անգլիերէնը եւ Գերմաներէնը, որոնք պիտի աւանդուին Ֆրանսերէնով :

Ձութակի եւ զաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումիներով Գիշերօթիկներու համար առողջ սնունդ, կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Տարեթոշակներու համար պատրաստ եմ ամէն զիւրութիւն ընծայել, եթէ անոնց կանոնաւոր վճարումը կանխաւ ապահովուի՝ եւ է միջոցաւ :

Հայկական կրթարանի  
Հիմնադիր-Տնօրէն  
ԿՐԾՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ